ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»
(Պ-328-01.07.2022-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ	նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ **Հոդված 1.** «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «4. Հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում նաև մանկական, կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազույն		Ընդունվել է

			պահանջներին համապատասխան:»:		
2.	Հեղինալ	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ:՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:»		Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական թողարկումները եթեր են դուրս գալու լիազոր մարմնի սահմանած ժամերին համապատասխան, ներկայացված նախագծով հիմնավորմամբ բարձրացված խնդիրը չի լուծվում: Ըստ այդմ, օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի	Առաջարկն ընդունվել է, հիմնավորումը խմբագրվել է:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված կարգավորումներն անհրաժեշտ է միավորել մեկ կետով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչպես նաև «ժեստերի լեզվով» բառերից առաջ լրացնել «հայերեն» բառը, բացի այդ անհրաժեշտ է վերանայել 2-րդ կետով շարադրվող դրույթը, քանի որ վերջինիս միտքը ավարտուն և ամբողջական չէ: Այս համատեքստում Նախագծի վերնագիրը խմբագրելու անհրաժեշտություն կառաջանա, մասնավորապես՝ «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը հարկավոր է փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է*	Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է

			նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:		
5.	ՀՀ կառավարություն	նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «վերաշարադրել» բառն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով:*	Առաջարկն ընդունվել է, կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված «և/կամ» բառը առաջարկում ենք փոխարինել «և» կամ «կամ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ *եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կամ «և» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:*	Առաջարկն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող բ. ենթակետում հստակեցման կարիք ունի «պաշտոնական միջոցառում» և «պետական տոն» հասկացությունները: Վերջինս անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին: Առաջարկվում է նույն կետով լրացվող գ. կետում բացել «ԱԺ» հապավումը: Միաժամանակ առաջարկում ենք «արտակարգ» բառից հետո լրացնել «և ռազմական» բառերը	Առաջարկն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «2-րդ մասի գ և դ կետերը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին մասի 2-րդ կետով լրացվող 4-րդ կետի գ. և դ. ենթակետերը» բառերով:	Առաջարկը չի ընդունվել, քանի որ 4-րդ հոդվածը խմբագրվել է և նշված կետը հանվել է նախագծից:	Չի ընդունվել
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումներն առաջարկում ենք նախատեսել եզրափակիչ դրույթների տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջը, որի համաձայն՝ ***նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում է նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները:***	Առաջարկն ընդուվել է, կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է